Հավելված 2

«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԻԶԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՈՒՎԿ ՓԲԸ
+374 11 700060
info@armleasing.am

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓ (ՍՔՈՐ) ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընդունվել է Ընկերության Տնօրինության 26.03.2024 թ. թիվ Ա-25 հրամանով,
Հրամանը ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

1. Սույն փաստաթուղթը սահմանում է վարկային պատմության և վարկային ամփոփ սքոր գնահատականի վրա ազդող գործոնների վերաբերյալ տեղեկատվությունը:
2. Վարկային պատմությունը հաճախորդի դրամային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունն է, որը ցույց է տալիս հաճախորդի պարտքերը, վճարումները, ինչպես նաև պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:
3. Վարկային ամփոփ (սքոր) գնահատականը հաճախորդի վարկային պատմության ուսումնասիրության հիման վրա ձևավորված Հաճախորդի վարկունակության և վարկարժանության թվային գնահատականն է:
4. Հաճախորդի կողմից տրված համաձայնության հիման վրա՝ «ԱՐՄԼԻԶԻՆԳ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) կողմից կատարվում են հաճախորդի ներկա և անցյալ դրամական պարտավորությունների մասին հարցումներ՝ Ընկերությունում հաճախորդի՝ դրամական պարտավորություններ ստանձնելու/ունենալու, երրորդ անձի/անձանց պարտավորությունների երաշխավոր լինելու, հաճախորդի նախաձեռնությամբ վերջինիս լիզինգի տրամադրման/վարկավորման հնարավորությունները դիտարկելու նպատակով: Սույն կետում նշված նպատակով կատարվող հարցումների քանակը կարող է ազդեցություն ունենալ (այդ թվում բացասական) հաճախորդի վարկային ամփոփ գնահատականի վրա:
5. Ընկերությունը հաճախորդ/ներ/ի լիզինգի տրամադրման/վարկավորման նպատակով կիրառում է ՖԱՅՔՈ սքոր գնահատականը, որի ձևավորման վրա ազդող գործոններից են, վարկերի սպասարկման որակը, վարկային պատմության մեջ ուշացումների առկայությունը, մարումների ուշացումների տևողությունը, վարկերով ծանրաբեռնվածությունը, վարկային պատմության տևողությունը, նախկինում օգտագործված վարկերի տեսակները, նոր վարկային դիմումները
6. Վարկային պատմությունը և/կամ Վարկային ամփոփ (սքոր) գնահատականը բարելավելու նպատակով հաճախորդին խորհուրդ է տրվում.
   - 6.1. լիովին մարել նախկինում գոյացած ժամկետանց պարտավորությունների վճարումները,
   - 6.2. գործող վարկերի մասով բացառել ժամկետանց՝ նույնիսկ մեկ օրվա կտրվածքով պարտավորությունների գոյացումը:
   - 6.3. նվազեցնել առկա վարկերի քանակը՝ դրանք մարելով մասամբ կամ լիովին,
   - 6.4. նվազեցնել առկա վարկերի մնացորդները,
   - 6.5. նվազեցնել տրված երաշխավորությունների քանակը և գումարը,
   - 6.6. ապահովել տրված երաշխավորությունների մասով ժամկետանց գումարների լիովին մարումը:

Ուժի մեջ է 01.04.2024թ-ից: